ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

Օրենսդրական փաթեթի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է՝

1. 2024 թվականի մարտի 16-ին ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում կայացած՝ տնտեսական քաղաքականության խորհրդի երրորդ նիստի Վ/40-2024 արձանագրության օրակարգի 1-ին հարցի 6.1.2 կետով սահմանված՝ «...**հնարավորինս սեղմ ժամկետներում աշխատանքներ իրականացնել բոլոր դպրոցների՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործելու ուղղությամբ**:», ինչպես նաև՝

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 28-ին կայացած N 48 նիստի արձանագրության օրակարգի 2)-րդ հարցի բ. կետով սահմանված՝ «**դպրոցների համապատասխան բովանդակային կառավարումը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, իսկ տնտեսական մասը մարզպետարաններին հանձնելու ուղղությամբ**» հանձնարարականների կատարման պահանջից:

Օրենսդրական նախագծերով առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են մեր երկրում հանրակրթական ուսումնական հաստատությունների լիազոր մարմնի վերանայման, կառավարման և գործունեության հիմնական ուղղություններով իրավակարգավորումների սահմանման անհրաժեշտությամբ:

Հանրակրթության ոլորտում ներկայում նոր ծրագրերով տեղի են ունենում բազմաթիվ միջոցառումներ, որոնք ուղղված են կրթության բովանդակության, դասավանդման մեթոդաբանության, սովորողների առաջադիմության մշտադիտարկման, ուսուցիչների մասնագիտական զարգացման, դպրոցների կառավարման մոդելի փոփոխության, վարչատնտեսական գործառույթների արտապատվիրակման և այլ ուղղություններով, որոնք միտված են կրթության արդյունավետության բարձրացմանն ու կրթության կազմակերպման համար պայմանների բարելավմանը, ուստի վերոնշյալ գործընթացների որակյալ կառավարումն իրականացնելու և որակական փոփոխություններ ունենալու տեսանկյունից է բխում

հանրակրթական դպրոցների բովանդակային կառավարումը ԿԳՄՍՆ-ին, իսկ վարչատնտեսական մասը մարզպետարանների աշխատակազմերին հանձնելու անհրաժեշտությունը:

Փոփոխությունները պայմանավորված են նաև «Հանրակրթության մասին» օրենքում որոշ ձևակերպումների, հղումների և կարգավորումների խմբագրման անհրաժեշտությունից՝ իրավակիրառ պրակտիկայում միանշանակ մեկնաբանելու նպատակով:

2. Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները

2024 թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական ուսումնական հաստատությունները գործում են տարբեր ենթակայությամբ, որի հիմնական սկզբունքը կրթական աստիճանն է և հաստատությունների աշխարհագրական բաշխվածությունը: Մասնավորապես.

1. տասը մարզերում կրթական 1-ին և 2-րդ աստիճանի հաստատությունները /313 հիմնական դպրոց/, ինչպես նաև գյուղական բնակավայրերում՝ միջնակարգ դպրոցները /745 1-12-րդ դասարաններ/ գործում են մարզպետարանների աշխատակազմերի ենթակայությամբ.
2. Երևանում կրթական 1-ին և 2-րդ աստիճանի հաստատությունները /140 հիմնական, 13 միջնակարգ դպրոց/ գործում են Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ.
3. կրթական 3-րդ աստիճանի հաստատությունները /98 ավագ դպրոց, 10 վարժարան, 12 միջնակարգ, 3 հիմնականդպրոցները գործում են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ:

Թեև տարբեր ցուցանիշներով Հայաստանի Հանրապետությունում կրթություն ստանալու իրավունքը և հնարավորությունները համեմատելի են աշխարհի առաջադեմ երկրների համանման ցուցանիշների հետ, այդուհանդերձ ոլորտում առկա են կրթության ապահովման, հաստատությունների հետ աշխատանքների համակարգման, ֆինանսավորման տրամադրման, այլ գործընթացների համակարգման հետ կապված խնդիրներ, որոնք կրթության մատչելիության, որակի և արդյունավետության վրա անմիջական ազդեցություն են ունենում:

Դեռևս 2021 թվականին մեկնարկած Հանրակրթության ոլորտի բարեփոխումներին նախորդել են մի շարք վերլուծություններ՝ ոլորտում առկա խնդիրների՝ հաստատություններում սովորողների մոտ ավարտական ամփոփիչ արդյունքների, հաստատության կառավարման, դպրոցի աշխատակազմի ընտրության, վերջինների կողմից պաշտոնային պարտականությունների կատարման, ուսուցիչների մասնագիտական զարգացման և այլ ուղղություններով, որոնց վերաբերյալ բազմաթիվ վերլուծություններ ու հիմնավորումներ են հրապարակվել:

Այս առումով վերջին տարիներին հանրակրթության ոլորտում ընթանում են խորքային փոփոխությունների գործընթացներ, որոնք պայմանավորված են թե՛ «Հանրակրթության մասին» օրենքի /ԱԺ,09.02.2022,ՀՕ-35-Ն/ փոփոխություններով, թե՛ 2022 թվականի նոյեմբերի 16-ին Ազգային ժողովի ընդունված «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030

թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքից բխող միջոցառումներով:

➢ **2024 թվականին՝ ոլորտում իրականացվող բարեփոխումներից 3 տարի անց, ԿԳՄՍ նախարարությունը արձանագրել է սովորողներ ուսումնառության դրական արդյունքներ, և ունենք հետևյալ ցուցանիշները՝**

● 2024 թվականին հրապարակվել են Տավուշի մարզում հանրակրթության պետական չափորոշչի փորձարկման երկամյա արտաքին անկախ գնահատման արդյունքները, որի համաձայն 2 տարվա ընթացքում սովորողների կրթական արդյունքն ավելացել է 6 ամսով, ինչը միջինում երկու անգամ գերազանցում է այլ երկրներում չափորոշչի փոփոխության արդյունավետությունը:

● Բնագիտության և մաթեմատիկայի 2023 թվականի միջազգային գնահատման (TIMSS) արդյունքներով՝ Հայաստանի չորրորդ դասարանցիները բարելավել են մաթեմատիկայի իմացությունը՝ 2019 թվականին գրանցված 498-ի նկատմամբ գրանցելով 15 միավոր աճ: Այժմ Հայաստանը 513 միավոր արդյունքով հայտնվել է միջինից բարձր արդյունքներ ցուցաբերող երկրների խմբում՝ հատելով 500-ի շեմը: Միաժամանակ կրճատվել է բնագիտության բնագավառում նվազագույն շեմը չհաղթահարող սովորողների շեմը՝ 82%-ը հաղթահարում է նվազագույն շեմը, 40%-ը՝ միջին շեմը:

● Կրթության տեսչական մարմնի կողմից ամեն տարի ավելի քան 800 երեխաների շրջանում անցկացվող հետազոտությունը ցույց է տվել, որ գեղարվեստական և գիտահանրամատչելի տեքստերը լուռ ընթերցելու և ընթերցածը հասկանալու, վերլուծելու, եզրահանգումներ անելու կարողությունները 10 տարեկանների շրջանում բարելավվել են. անբավարար արդյունք ունեցող երեխաների թիվը 2022 թվականի 47%-ից 2023 թվականին իջել է շուրջ 20%-ով՝ դառնալով 28%, երեխաների կեսից ավելին ունեցել է 64.3%-ից բարձր արդյունք՝ այսինքն ճիշտ է պատասխանել իրենց կարդացած տեքստերին վերաբերող 14 հարցերից առնվազն 9-ին:

● Հանրակրթության նոր չափորոշչի ներդրման շրջանակում շարունակվել են նոր դասագրքերի ստեղծման և տպագրության աշխատանքները՝ ավելի լավ արդյունքներով. վերջին երկու տարվա ընթացքում ստեղծվել և տպագրվել են 95 անուն դասագրքեր (53 անունը՝ 2024 թվականին), որոնք ժամանակին բաշխվել են դպրոցներին: Մրցակցային ընթացակարգերի արդյունքում մեկ դասագրքի արժեքը միջինում նվազել է 23-26%-ով:

Սովորողների ուսումնառության ուղղությամբ թեև գրանցվել են հաջողություններ, այնուամենայնիվ դեռևս անհրաժեշտ են հետևողականություն պահանջող աշխատանքներ:

Մասնավորապես, հանրակրթության նոր չափորոշչի ներդրման ուղղությամբ շարունակվում են մի շարք ծրագրերով դասավանդողների մասնագիտական հմտությունների զարգացումը, սովորողակենտրոն, կարողունակահեն ուսուցում կազմակերպելու, սովորող-ուսուցիչ երկխոսության կայացման միջոցով անձի մոտ պետական չափորոշչով սահմանված

կարողութենակությունները զարգացնելու և ամրապնդելու ուղղությամբ: Հատկապես կարևորվում է «սովորել սովորել» կարողունակության զարգացումը, որին նպաստում են նաև նոր մեթոդաբանությամբ՝ քննադատական մտածողությունը զարգացնող, ստուգող հարցադրումներով կազմված դասագրքերը:

Բնագիտության ուղղությամբ գրանցված արդյունքը կապված է տեսական գիտելիքը գործնականում կիրառելու ոչ բավարար փորձառության հետ, ինչը բնագիտական լաբորատորիաների ամբողջական ապահովման և դասավանդողների կարողությունների զարգացմանը զուգահեռ դրական արդյունք կապահովի, որն իրականացվում է Կառավարության ծրագրով սահմանված հանրակրթական դպրոցների բնագիտամաթեմատիկական-ճարտարագիտական լաբորատորիաների տրամադրման ծրագրի միջոցով, որի շրջանակում ներկայում լաբորատորիաներով հագեցվել է 540 դպրոց կամ գործող դպրոցների կեսը):
Սովորողների ընթերցանության և կարդացածը հասկանալու հմտությունը զարգացնելու ուղղությամբ շարունակվում է համալիր և հետևողական միջոցառումների իրականացումը, որն ընդլայնվել է նաև Նախարարության կողմից սահմանված ընթերցանության դպրոցական օլիմպիադայի անցկացման միջոցառմամբ: Այն հնարավորություն կտա հետագայում էլ ավելի բարելավել 2024 թվականին արդեն իսկ 2019թ-ի համեմատ առաջընթաց գրանցած այս ուղղությունը, ինչն ուղղակիորեն կապված է հետագայում բոլոր առարկաների ոլորտում բարձր արդյունք գրանցելու հետ:

Հանրակրթության ոլորտի բարեփոխումներն իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- կրթության բովանդակության բարելավմանն ուղղված ծրագրեր, որի շրջանակում ներդվել է Հանրակրթության նոր չափորոշիչը, ստեղծվել և տպագրվել են Նոր չափորոշչին համապատասխան դասագրքեր, սովորողների գնահատման նոր համակարգ, ուսուցման դժվարությունները կանխարգելող երկարօրյա կրթության համակարգ, սովորողների բազմակողմանի զարգացումը խթանող խմբակների գործունեություն, ինչպես նաև քննադատական և ստեղծագործական կարողությունները զարգացնող նախագծային ուսուցման հնարավորություններ: Վերոնշյալ բոլոր գործընթացներն համակարգվում են կրթության պետական լիազոր մարմնի կողմից և դրանց իրականացման արդյունավետության բարձրացման և մշտադիտարկման և ստացված արդյունքների հիման վրա արձագանքնման մեխանիզմների բարելավման համար էական ազդեցություն կարող է ունենալ հանրակրթական ուսումնական հաստատությունների ենթակայության փոփոխությունը և ԿԳՄՍՆ-ին լիազոր մարմնի գործառույթի տրամադրումը:
- Դպրոցների կառավարման նոր մոդելի գործարկմանն ուղղված ծրագրեր, որոնք հիմնականում ուղղված են դպրոցների տնօրենների և վարչատնտեսական համակարգողների նշանակմանը: Այս ծրագրերի շրջանակում ամբողջապես վերափոխվել է հանրակրթական

դպրոցի տնօրենի նշանակման ընթացակարգը և հավակնորդին ներկայացվող պահանջները, որոնք պետք է բացառապես համապատասխանեն կրթության բովանդակային կառավարմանը և դպրոցական կրթության արդյունավետության բարձրացմանը: Տնօրենների ընտրության գործընթացում շուրջ երկու տարի է, որ ԿԳՄՍ նախարարությունն ունի կարևոր դերակատարում՝ համակարգելով դպրոցի զարգացման ծրագրերի փորձաքննությունը և իրականացնելով տնօրենի հավակնորդների հետ հարցազրույցների անցկացումը: Վերջին երկու տարիների ընթացում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել նաև վարչատնտեսական գործառույթների արտապատվիրակման աշխատանքների ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա մասնագիտացված կազմակերպություններին տրամադրել որակյալ ծառայություններ և դրանով իսկ դպրոցերում ստեղծել կրթության կազմակերպման համար առավել արդյունավետ պայմաններ և միջավայր: Վերոնշյալ գործընթացների կազմակերպման ուղղություններով բոլոր աշխատանքներն իրականացվում են ԿԳՄՍՆ-ի կողմից և դրանք արդյունավետ իրականացումն ապահովելու տեսակետից ևս դպրոցների լիազորության փոխանցումը ԿԳՄՍՆ-ին կստեղծի գործընթացների առավել արդյունավետ կառավարման առավել մեծ հնարավորություններ, իսկ արտապատվիրակված ծառայությունների տրամադրման մշտադիտարկումը նախատեսվում է պատվիրակել մարզերին և Երևան քաղաքին:

- Ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ուղղված ծրագրեր, որոնք վերջին տարիներին տարեցտարի ավել մեծ թափ են հավաքում, սակայն վիճակարգությունն ակնհայտորեն ցույց է տալիս, որ ԿԳՄՍՆ ենթակայությամբ գործող դպրոցներում առավել շատ է իրենց մասնագիտական զարգացմամբ հետևողականորեն զբաղվող ուսուցիչների թիվը, մասնավորապես կամավոր ատեստավորման և տարակարգի դիմած, ինչպես նաև տարաբնույթ միջազգային ծրագրերին մասնակցող ուսուցիչների թիվը: Այս հանգամանքը ևս վկայում է այն մասին, որ նախարարության կողմից իրականացվող ծրագրերի՝ մասնավորապես, կամավոր, հերթական ատեստավորումների, տարակարգի շնորհման, դասագրքերի ապահովման, դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի գործարկման, ուսուցչի աշխատավարձի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացմանը նպաստող գործոն կարող է հանդիսանալ դպրոցների ենթակայության փոփոխությունը:
- Թվայնացման ծրագրերի շրջանակում կրթությանն առնչվող գործընթացներից թվայնացվել են հիմնական մի շարք ուղղություններ՝ դպրոցների ֆինանսավորում, ավարտական փաստաթղթերի տրամադրում, էլեկտրոնային մատյանի վարում, դասի պլանավորում, տրանսպորտային ծախսերի փոխհատուցում, կամավոր ատեստավորման անցկացում, հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքի գնահատում, երկարօրյա ծրագրի կազմակերպում, ներառական կրթություն, պարտադիր կրթությունից դուրս մնացած սովորողների տվյալների ապահովում, ուսուցիչների գործուղմանն առնչվող տվյալների մուտքագրում և այլ գործընթացներ:

Թվայնացման փուլում են գտնվում ոլորտի այլ գործընթացներ, ինչպիսիք են՝ դպրոցի տնօրենի, վարչատնտեսական համակարգողի, ինչպես նաև ուսուցչի թափուր տեղի հայտարարման, դպրոցականների օլիմպիադաների մասնակցության հայտերի ներկայացման, էքստեռն քննությունների մասնակցության, տարակարգի շնորհման, հերթական ատեստավորման համար ձեռք բերված կրեդիտների հաշվառման, կամավոր ատեստավորման և վարձատրության բարձրացման, աշխատակիցների վարձատրության հաշվարկային թերթիկի ձևավորման, տարվա լավագույնների, դպրոցների ֆիզիկական պայմանների, լաբորատոր սարքավորումների առկայության, տնօրենի կատարողականի գնահատման և դրա արդյունքում տնօրենի ատեստավորման, բոլոր դասարանների դասագրքերի պահանջարկի ձևավորման և այլ գործառույթներ:

Վերոշարադրյալը վկայում է այն մասին, որ ժամանակակից տեխնոլոգիական համակարգերը հնարավորություն են տալիս թվայնացման միջոցով առավել թափանցիկ և տեսանելի դարձնել բավականին մեծ ծավալով գործընթացներ, որոնք տեղի են ունենում հանրակրթական դպրոցներում, և որոնց վերլուծությունը կարևոր տեղեկատվություն է ինչպես իրականացնվող ծրագրերի որակի և արդյունավետության գնահատման, այնպես էլ դրանց հիման վրա գործող ծրագրերի փոփոխության կամ նոր ծրագրերի մշակման տեսանկյունից:

Ընթացքի մեջ են հանրակրթական ուսումնական միջավայրերի շենքային և գույքային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերը, որոնց շրջանակում մասնավորապես կարևորվում է Կառավարության 300 դպրոց ծրագիրը, որի շրջանակում կառուցվում, վերակառուցվում, հիմնանորոգվում կամ վերանորոգվում են կրթական նոր ստանդարտներին համապատասխանող ուսումնական միջավայրեր: Այս բոլոր հաստատությունները համալրվում են ժամանակակից նոր գույքով, որոնց ցանկը և տեխնիկական բնութագրերը մշակվել և հաստատվել են ԿԳՄՍՆ-ի կողմից: Այս ծրագրին զուգընթաց տեղի են ունենում ընթացիկ բարեկարգման մի շարք ծրագրեր, որոնք ևս թեև մասնակիորեն, բայց ստեղծում են կրթության կազմակերպման համար առավել բարեկարգ միջավայր: Բոլոր նորակառույց և բարեկարգված դպրոցների ընթացիկ պահպանությունը, ինչպես նաև դպրոցաշինության նոր ծրագրերում ընդգրկման, ընթացիկ բարեկարգումների կարիքի մասին տեղակատվության հավաքագրման, գույքի պահպանման և տնտեսական գործընթացների կազմակերպման արդյունավետության բարձրացմանը կարող է նպաստել մարզպետների աշխատակազմերի կողմից նմանատիպ բնույթ ունեցող աշխատանքների համակարգումը, այդ թվում՝ ավագ դպրոցների:

Վերոնշյալ ծրագրերի արդյունավետ իրականացման և տարբեր ենթակայությունների դեպքում քաղաքականությունն ու ծրագրերը տարբեր սկզբունքներով ու մոտեցմամբ կիրառելը կանխարգելելու համար կարևոր է առանձնացնել ըստ լիազոր մարմինների՝ ուսումնական հաստատությունների գործունեության, մասնավորապես մշակված քաղաքականության իրականացման տարբերակված մոտեցումների մասին խնդիրը:

ՀՀ ԿԳՄՍՆ գնահատման և թեստավորման կենտրոնի տվյալներով (http://www.atc.am/files/verlucutyunner/2021/Avartakan_9-rd%20dasaran.pdf)՝ մարզային անհամաչափություններն ի հայտ են գալիս հիմնական կրթության (1-9 դասարաններ) որակը գնահատող՝ 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքներում: Դրանցից հիմնականների՝ հայոց լեզվի և մաթեմատիկայի հանրապետական միջին միավորները 2021թ.-ին եղել են համապատասխանաբար 13.7 և 12.1՝ քսան հնարավորից: Ընդհանուր առմամբ, հանրապետությունում հայոց լեզվից 14 և ավելի կամ միջակից բարձր միավոր է ստացել մասնակիցների մոտ կեսը՝ 50.8 տոկոսը, իսկ մաթեմատիկայից՝ ընդամենը 32.6 տոկոսը: 14 միավորից բարձր հավաքած աշակերտների ամենացածր ներկայացվածությունը գրանցվել է Վայոց Ձորի, Արարատի, Արմավիրի, Տավուշի, Արագածոտնի, մարզերում, ամենաբարձրը՝ Երևանում: Գյուղական բնակավայրերում նշված կրթական արդյունքներն զիջում են քաղաքային բնակավայրերի արդյունքներին՝ հայոց լեզվի պարագայում 37.4 տոկոս՝ քաղաքայինի 58.4 տոկոսի համեմատ, իսկ մաթեմատիկայի պարագայում 23.1 տոկոս՝ քաղաքայինի 38.3 տոկոսի դիմաց: Սա վկայում է հանրակրթության 1-9 դասարաններում կուտակված կրթական ցածր արդյունքների վրա տարածքային անհամաչափությունների մեծ ազդեցության մասին:

- Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխարհագրորեն մեծ տարածք ունեցող երկրներում դպրոցների ենթակայության այլ մոդելներ են գործում, օրինակ՝ քաղաքապետարանի կամ մարզային կամ համայնքային ենթակայությամբ: Դրանք հիմնականում հանդիպում են զարգացած երկրներում: Հաշվի առնելով, որ մեր երկրում վարչատարածքային բաժանումների և հաստատությունների թիվը այնքան մեծ չէ, և դրանք կարող են մեկ կառույցի կողմից կառավարվել, ուստի նպատակահարմար է կիրառել արդեն իսկ այլ երկրներում գործող և փորձարկված մոդելը:

Ամբողջ աշխարհում կառավարությունները տարբեր մոտեցումներ են կիրառում՝ իրենց կրթական համակարգը կազմակերպելու և որակյալ կրթություն մատուցելու համար, և ընդհանուր առմամբ, ոլորտը կառավարվում է 2 եղանակով՝ կենտրոնացված և ապակենտրոնացված: Թեև կրթական համակարգերը կարող են տարբեր լինել նախագծման տասնյակ սկզբունքներով, սպեկտրի երկու ծայրերում կենտրոնական և ապակենտրոն մոդելն է:

Դպրոցական կրթական համակարգը մի ամբողջություն է, որը ներառում է սովորողների կրթությանն առնչվող բովանդակային բաղադրիչները, հաստատությունների կառավարումը, ուսուցիչների պատրաստվածությունը, ենթակառուցվածքների ամբողջությունը և այլն: Համակարգը ներառում է օրենքներ, քաղաքականություն, կանոնակարգեր, պետական ֆինանսավորում, ռեսուրսների բաշխում, ընթացակարգեր, լոգիստիկա, մարդկային ռեսուրսներ, ուսումնական ծրագիր և մանկավարժություն:

Տարբեր երկրների համար կառավարման կենտրոնացված կամ ապակենտրոնացման եղանակով կրթական համակարգի կառավարման համար որոշումները կայացվում են՝ ելնելով

երկրից մեծությունից, զարգացվածության աստիճանից, կրթական համակարգի ծավալներից և մի շարք այլ գործոններից:

Դպրոցական կրթական համակարգի կազմակերպման վերաբերյալ որոշումը ազդում է գործունեության ողջ շղթայի վրա՝ սկսած կրթության ֆինանսավորման և մատուցման եղանակից մինչև գործառնական այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են կրթության մատուցումը և անձնակազմի կառավարումը, ուսումնական մասի բովանդակության ստանդարտացումը: Լիազոր մարմինը պատասխանատու է ուսումնական ծրագրերի սահմանման, անձնակազմի աշխատանքի ընդունման, բյուջեի կառավարման, կրթական շենքերի կառուցման և այլնի համար:

Կրթական համակարգի այս մոդելով կառավարման վերին մակարդակներին տրվում է որոշումներ կայացնելու պատասխանատվություն, իսկ կառավարման երկրորդ մակարդակներին տրվում է իրավասություն՝ գործառնական խնդիրների լուծման համար:

Կենտրոնացված կառավարման առավելությունները.

Պլանավորումն ու զարգացումն ավելի ինտեգրված են իրականացվում: Կենտրոնացված որոշումները հանգեցնում են ստանդարտացված քաղաքականության և ընթացակարգերի, որոնք միատեսակ են և պահպանվում են կրթական կազմակերպական կառուցվածքում՝ նպատակ ունենալով հեշտացնել համակարգումը: Ապահովվում է գործընթացների իրականացման միատեսակությունը: Համապատասխան որոշումների կայացման կենտրոնացումը կարող է նման և համաչափ առաջընթաց ապահովել նաև արդյունքի տեսանկյունից: Այս մոդելի առավելությունը նաև այն է, որ լիազոր մարմնի ղեկավար անձնակազմը փորձառու է և լայն պատկերացում ունի կրթական կազմակերպչական կառուցվածքի մասին, որն ապահովում է որակապես արդյունավետ որոշումներ: Հաճախ ստուգված և փորձարկված դատողություններ են արվում՝ հաշվի առնելով կրթական համակարգի լավագույն շահերը:

Արտակարգ իրավիճակներում որոշումներն արագ են կայացվում, քանի որ գործելու համար թույլտվություն չի պահանջվում: Ռեսուրսների կառավարումն ավելի արդյունավետ է, քանի որ յուրաքանչյուր դպրոցի որոշում կայացնողները քաջատեղյակ են դրա պահանջներին: Ռեսուրսներն ավելի թափանցիկ են օգտագործվում:

Կրթական կազմակերպչական կառուցվածքում որոշումներ կայացնելու իրավունքի հետ կապված երկիմաստություն կամ հակասություն չկա:

Մոդելի մարտահրավերները՝

Լիազոր մարմնի ընդունած որոշումները համապատասխան օղակում կիրառելու դեպքում հաստատության կազմակերպչական գործընթացն իրականացնողների մասնագիտական զարգացումը կարող է դանդաղել, որի ուղղությամբ կկազմակերպվեն վերապատրաստումներ:

Դպրոցի կարիքների կամ արտաքին գնահատման համար ռեսուրսները կարող են բավարար չլինել, ինչը կարող է ազդել գնահատումների որակի և իրական կատարողականի վրա:

Հաստատությունների կառավարման ուղղությամբ ուսումնասիրելով հետխորհրդային մեծ և փոքր, ինչպես նաև զարգացած մի շարք երկրների փորձը՝ պարզ է դառնում հետևյալը՝ քանի որ գոյություն չունի դպրոցները կառավարելու բոլոր երկրներին համապատասխան մեկ միասնական համակարգ, հետևաբար, որևէ երկրում կրթական համակարգի կառավարման վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի է առնվել մի քանի գործոն, որոնք համադրվել են կրթական համակարգի ընթացիկ իրավիճակի հետ՝ միաժամանակ նկատի ունենալով ոլորտի զարգացման ռազմավարական նպատակներն ու ուղղությունները:

Էստոնիայի կրթական համակարգում կրթության ապահովումը վերահսկվում է պետության կողմից, սակայն սահմանված է պատասխանատվության բաշխումը նահանգի, տեղական ինքնակառավարման մարմինների և դպրոցների միջև: Պետական մակարդակով Էստոնիայի կրթության ռազմավարությունը 2021-2035 թվականներին ուղղորդում է երկարաժամկետ զարգացումները: Կրթության տարբեր աստիճանների չափորոշիչները, ուսումնական պլանը երաշխավորում են ապահովումը, օրենքներն ու կանոնակարգերը սահմանում են կրթության ֆինանսավորման, պետական վերահսկողության և որակի գնահատման սկզբունքները: Էստոնիայի կրթական համակարգի տվյալները հավաքվում են վեբ կայքի վրա հիմնված ազգային ռեգիստրում՝ EHIS (Էստոնիայի կրթական տեղեկատվական համակարգ):

Տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ապահովել իրենց տարածաշրջանում բնակվող յուրաքանչյուր երեխայի վաղ մանկության կրթություն և խնամք ստանալու հնարավորություն, իսկ սովորելու տարիքում գտնվող յուրաքանչյուր երեխայի՝ բնակության դպրոցում սովորելու հնարավորություն:

Ուզբեկստանում կրթության համակարգի ընդհանուր կառավարումն իրականացնում է Նախարարների գրասենյակը, որի գործառույթներից են՝ կրթության համակարգում միասնական պետական քաղաքականության վարում, կրթության կառավարման պետական կառույցների վերահսկողություն, կրթության կառավարման ծրագրերի մշակում և իրականացում, կրթական հաստատությունների ստեղծման, վերակազմակերպման և փակման ընթացքի կարգավորում, ուսումնական հաստատությունների կրեդիտավորման, ուսուցիչների ատեստավորման կարգի սահմանում, պետական կրթական ստանդարտների հաստատում, մեկ հաստատությունից մյուսը սովորողի տեղափոխման կարգի հաստատում, օրենսդրությամբ նախատեսված այլ իրավասություններ:

Խոշոր և զարգացած երկրներում, ինչպիսիք են Ճապոնիան, Մեծ Բրիտանիան, Սինգապուրը, հանրակրթության ոլորտում ևս գործում է կենտրոնացված կառավարման համակարգը, սակայն, օրինակ, Ճապոնիայում տեղական կառավարումն իրականացվում է կրթական խորհուրդների միջոցով, որոնք գործում են քաղաքի և գյուղական բնակավայրերի մակարդակներում: Սինգապուրում կենտրոնացված կառավարումն իրականացվում է դպրոցի կրթական գործընթացի մասնակիցների ակտիվ աջակցությամբ ու ներգրավվածությամբ: Մեծ Բրիտանիայում (Անգլիա, Շոտլանդիա, Ուելս, Հյուսիսային Իռլանդիա) նույնպես մեծ է

տեղական մարմինների աջակցությունը կրթական համակարգի գործունեության և ազգային քաղաքականության իրականացման հարցում:

ՀՕ գործող իրավակարգավորումներով հանրակրթության ոլորտում միջազգային ծրագիր կարող է իրականացվել միայն ոչ պետական ուսումնական հաստատություններում:

Մեր երկրում կրթության ոլորտի բարեփոխումներն իրականացնելիս ակնհայտ է դառնում, որ պետական ուսումնական հաստատությունում միջազգային ծրագրի իրականացման արգելքը հնարավորություն չի ընձեռում արդեն իսկ փորձարկված, արդյունավետ միջազգային ծրագրերի ներդրում նաև պետական հանրակրթական այն հաստատություններում, որնցում այդ ուղղությամբ առկա են սովորողի կրթական պահանջներ:

Պետական հաստատություններում ծրագրի ներդրման արգելքը սահմանափակում է միջազգայնորեն մրցունակ մասնագետներ ունենալու հնարավորությունը, միջազգային կրթական գործընթացներին սովորողների մասնակցությանը, դրանցով նաև՝ կարողությունների զարգացմանը, որը կրթական համակարգի միջազգային ինտեգրման լրջագույն խոչընդոտ է հանդիսանում:

3. Կարգավորման առարկան և անհրաժեշտ ռեսուրսներ

Հաշվի առնելով, որ հանրակրթական դպրոցների ենթակայության փոփոխությունը ոչ թե մեխանիկական, այլ բազմաշերտ և հսկայածավալ աշխատանք է ենթադրու,մ իրականացվել են նախապատրաստական և վերլուծական աշխատանքներ, մասնավորապես՝

- գործող համակարգի պայմաններում գործառույթների ցանկ և պատասխանատուների գույքագրում.
- թվայնացված գործառույթների գույքագրում և և թվայնացման ենթակա գործառույթների ժամանակային պլանավորում.
- կենտրոնացված կառավարման անցնելու դեպքում՝ աշխատանքային ծավալների վերլուծություն և բաշխում:

Գործող համակարգի վերծությունը վկայում է, որ ներկայումս գործառույթները բաշխված են լիազոր մարմինների և պետական լիազոր մարմնի միջև, սակայն արդեն իսկ բազմաթիվ գործառույթներ թվայնացվել են կամ թվայնացման փուլում են և հետևաբար դրանց համակարգման անհրաժեշտություն այլևս հաճախ չկա:

Միևնույն ժամանակ, դպրոցների արդյունավետության բարձրացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր արդեն իսկ իրականացվում են ԿԳՄՄՆ-ի կողմից, սակայն դրանց արդյունավետությունն էականորեն տարբերում է տարբեր լիազոր մարմինների կատարած աշխատանքների արդյունքներից՝ կախված դրանց իրականացմանն ուղղված հետևողականությունից և պատասխանատուների առջև դրված պահանջներից:

Վերջին 3 տարիներին իրականացրած կամավոր ատեստավորման մասին վերլուծությունը ցույց է տալիս, որ ատեստավորման դրական շեմը հաղթահարած ուսուցիչների ընդհանուր թվի մեջ ԿԳՄՍ ենթակայությամբ դպրոցների ուսուցիչների մասնաբաժինը կազմում է շուրջ 22 %, իսկ շուրջ 78 %-ը բաժին է ընկնում Երևանի քաղաքապետարանի ու մարզպետների աշխատակազմերի ենթակայությամբ դպրոցների ուսուցիչներին: Սա այն դեպքում, երբ հանրապետության բոլոր դպրոցների միայն 8 %-ն է գործում ԿԳՄՍ ենթակայությամբ:

Հաստատությունների ենթակայությամբ պայմանվորված՝ տարբերվում են նաև սովորողների միասնական քննությունների արդյունքները: Մասնավորապես, ցուցաբերած արդյունքներից առավել բարձր են կրթահամալիրների և վարժարանների սովորողները, այնուհետև՝ ավագ դպրոցների, հաջորդիվ՝ միջնակարգ դպրոցների սովորողների արդյունքները:

Դպրոցների ենթակայութման փոփոխությունը բնականաբար, ԿԳՄՍՆ-ի համար էապես մեծացնելու է աշխատանքների ծավալը: Ներկայումս համակարգվող 123 պետական հանրակրթական, թվով 14 մասնագիտացված և հատուկ դպրոցների փոխարեն համակարգվելու են **1343** դպրոցի աշխատանքները, սակայն մյուս կողմից դիտարկելով՝ այն հնարավորություն կտա միասնական, որակյալ և արդյունավետ քաղաքականության իրականացումն ապահովելու համար: Նախատեսվող աշխատանքների ծավալի նվազեցմանն էապես օգնելու է թվայնացման գործընթացների ընդլայնումը, որոնց ուղղություններն արդեն իսկ քարտեզագրվել են, և շուրջ մեկ տասնյակ գործառույթների թվայնացում նախատեսվում է ավարտել 2025 թվականի ավարտին:

ԿԳՄՍ նախարարության համակարգմամբ իրականացվող գործընթացների արդյունքում դպրոցի մակարդակում հաստատության տնօրենը, մանկավարժական և վարչական անձնակազմը պատասխանատու են դպրոցների ամենօրյա կառավարման, կրթական ծրագրի արդյունավետ իրականացման համար: Այն ներառում է նաև անձնակազմի, սովորողների և ռեսուրսների կառավարումը, ինչպես նաև քաղաքականության և կանոնակարգերի ուսումնական գործընթացին համապատասխանության և կրթական ծրագրերի իրականացման ապահովումը:

Ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ուղղված ծրագրերի արդյունավետ կիրառումը հիմք կհանդիսանա կրթության մատչելիության և որակի ապահովման համար: Պլանավորված որակյալ դասերի, սովորողներին տրված ճիշտ հրահանգների, վերջինների ուսումնառության արդյունքների գնահատումը, սովորողների կրթական կարիքների բավարարման նպատակով համայնքի և ծնողների հետ համագործակցությունը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության ճիշտ կազմակերպումը կարևոր նախադրյալ կդառնան սովորողների մոտ կարողունակությունների ձևավորման, կրթության ռազմավարական նպատակների իրականացման համար:

Հաշվի առնելով, որ Երևանի քաղաքապետարանի և մարզպետների աշխատակազմերի կրթության ոլորտը համակարգող ստորաբաժանումների (ստորև աղյուսակով ներկայացվում է ստորաբաժանումների հաստիքների մասին տեղեկությունը) աշխատակազմերը տարբեր կառուցվածքի ու մեծության են, հետևաբար, հաստատությունների ենթակայության փոփոխությունից հետո թեև Երևանի քաղաքապետարանի և մարզպետների աշխատակազմերի կրթության ոլորտը համակարգող ստորաբաժանումների կառավարման գործառույթները կսահմանափակվեն, և հաստիքների կրճատման անհրաժեշտություն կառաջանա:

Հարցը կարող է քննարկվել սույն օրենսդրական փաթեթով նախատեսված գործառույթների ամրագրումից հետո:

Հանրակրթական դպրոցների գործունեությունը համակարգող ստորաբաժանումներ

Լիազոր մարմին /մարզ/	**Համակարգումն իրականացնող վարչությունը**	**Ստորաբաժանման աշխատակիցները թիվը և հաստիքները**		**Ամփոփ**
Արագածոտն	Կրթության, մշակույթի և սպորտի	Վարչության պետ Գլխավոր մասնագետ Ավագ մասնագետ	1 5 1	**7**
Արարատ	Կրթության, մշակույթի և սպորտի	Վարչության պետ Գլխավոր մասնագետ Ավագ մասնագետ	1 4 2	**7**
Արմավիր	Կրթության, մշակույթի և սպորտի	Վարչության պետ Գլխավոր մասնագետ Ավագ մասնագետ	1 2 4	**7**
Գեղարքունիք	Կրթության, մշակույթի և սպորտի	Վարչության պետ Գլխավոր մասնագետ Մասնագետ	1 7 1	**9**
Երևան	Հանրակրթության վարչություն	Վարչության պետ Վարչության պետի տեղակալ Մասնագետներ	1 2 15	**18**
Լոռի	Կրթության, մշակույթի և սպորտի	Վարչության պետ Գլխավոր մասնագետ Մասնագետ	1 4 3	**8**
Կոտայք	Կրթության, մշակույթի և սպորտի	Վարչության պետ Գլխավոր մասնագետ Ավագ մասնագետ	1 3 3	**7**
Շիրակ	Կրթության, մշակույթի և սպորտի	Վարչության պետ Գլխավոր մասնագետ Ավագ մասնագետ Մասնագետ	1 5 2 1	**9**
Սյունիք	Կրթության, մշակույթի և սպորտի	Վարչության պետ Գլխավոր մասնագետ Մասնագետ	1 5 1	**7**

Վայոց ձոր	Կրթության, մշակույթի և սպորտի	Վարչության պետ Գլխավոր մասնագետ	1 3	**4**
Տավուշ	Կրթության, մշակույթի և սպորտի	Վարչության պետ Գլխավոր մասնագետ Ավագ մասնագետ	1 3 1	**5**
ՀՀ ԿԳՄՍՆ	Հանրակրթության վարչություն	Վարչության պետ Բաժնի պետ Գլխավոր մասնագետ Ավագ մասնագետ Մասնագետ Փորձագետ	1 3 14 1 1 3	**23**
Հանրակրթության և կրթության վարչությունների աշխատակազմը				**111**

Թեև թվայնացման գործընթացը կնպաստի աշխատանքների ծավալի կրճատմանը, այնուամենայնիվ աշխատանքների ծավալի շուրջ 10 անգամ ավելացումը ենթադրում է նաև լրացուցիչ հաստիքների ավելացում՝ ԿԳՄՍ նախարարության հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում, մասնավորապես, հանրակրթության, անձնակազմի կառավարման, իրավաբանական, ֆինասնաբյուջետային և հաշվապահական հաշվառման վարչություններում, ինչպես նաև կազմակերպատնտեսական և աջակցող այլ վարչություններում:

Հաշվի առնելով ԿԳՄՍ նախարարության քաղաքականությունը փոքր դպրոցների, կրթահամալիրների կառուցման և գյուղական փոքր համայնքներում ժամանակակից ստանդարտներին համապատասխան կրթական միջավայրի պահովման տեսակետից՝ նախատեսվում է, որ կրթահամալիրները կգործեն որպես համայնքային կենտրոններ, ուստի դրանց համակարգման և զարգացման գործում կարևոր դերակատարում կարող են ունենալ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց էլ օրենքի նախագծով վերապահվում են այս գործառույթները:

Այս ողղությամբ արդեն իսկ փորձնական աշխատանք է իրականացվում շվեդական մի կազմակերպության հետ, որի շրջանակներում աշխատանքներ են իրականացվում 11 համայնքներում՝ դպրոցի և համայնքի միջև կապի ակտիվացման և փոխգործակցության ընթացակարգերի մշակման ուղղություններով:

4. Ակնկալվող արդյունք

Հանրակրթական դպրոցների կենտրոնացված կառավարման անցնելու գործընթացը կնպաստի ոլորտային բազմաթիվ այլ խնդիրների լուծմանը, այդ թվում՝

- կրթության զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման և վերլուծությունների արդյունավետության բարձրացմանը.

- բարեփոխումների իրականացման միասնական ուղերձների և մոտեցումների պահպանմանը.
- կառավարման և գործառույթների ապակենտրոնացման մեկնարկին.
- դպրոցների ինքնավարության կարողությունների զարգացմանը և այլն:

ՀՀ-ում հանրակրթական ուսումնական հաստատությունների կենտրոնացված կառավարումը մեկ լիազոր մարմնի՝ ԿԳՄՍ նախարարության կողմից նախատեսում է գործառույթների միասնական և համալիր փոխազդեցություն պետական, տարածքային և տեղական մակարդակներում՝ ուղղված որակյալ կրթություն ապահովելուն և սովորողների կրթական կարիքները բավարարելուն, ինչն էլ կարևոր խթան կհանդիսանա մարդկային կապիտալի զարգացման առումով:

ԿԳՄՍ նախարարությունը՝ որպես լիազոր մարմին, ուսումնական հաստատությունների գործունեության, կրթական տարբեր աստիճաններում ներդրված ծրագրերի, մշակված քաղաքականության իրականացման ուղղությամբ կցուցաբերի միասնական մոտեցում, որը կիրականացնի Երևանի քաղաքապետարանի, մարզպետների աշխատակազմերի ոլորտային պատասխանատուների աջակցությամբ և անմիջական համագործակցությամբ:

Պետական ուսումնական հաստատություններում միջազգային ծրագրի իրականացման հնարավորություն ընձեռելով՝ սովորողների շրջանում օտար լեզուների իմացության մակարդակը կբարելավվի, որով կրթությունը մրցակցային և կայուն զարգացման հիմքերի վրա կդրվի:

«Հանրակրթության մասին» օրենքի 9-րդ հոդվածում պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ հիմնադրելու մասով Կառավարության՝ որպես հիմնադրի իրավասության ձևակերպումից «պետական ոչ առևտրային կազմակերպության կազմակերպական-իրավական ձևով» սահմանափակող ձևակերպումը հանելով՝ հնարավոր կլինի հաստատությունների շրջանակում դիտարկել նաև օրինակ՝ հիմնադրամների, կրթահամալիրների, ՀՈԱԿ-ների հիմնումը:

«Կրթության մասին» օրենքում կսահմանվի «կրթահամալիր» հասկացությունը: ՀՀ մի շարք բնակավայրերում կրթահամալիրների կառուցումից հետո նախատեսվում է դրանք դարձնել համայնքային զարգացման կենտրոններ՝ նախադպրոցական և հանրակրթության բոլոր աստիճանների կրթության ապահովման հետ նաև ոչ ֆորմալ կրթության կազմակերպում՝ բնակիչների կրթական կարիքներին համապատասխան:

5. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին

Հանրակրթական ուսումնական հաստատությունների ենթակայության փոփոխության դեպքում ԿԳՄՍ նախարարության հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում լրացուցիչ հաստիքների ավելացման անհրաժեշտություն կառաջանա:

««Հանրակրթության մասին» օրենքի և հարակից **օ**րենսդրական փոփոխությունների արդյունքում նախագծերի ընդունմամբ կառաջանա լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն: Լրացուցիչ ծախսերը կիրականացվեն ՀՀ պետական բյուջեով ՀՀ մարզպետների աշխատակազմերի պահպանման գծով նախատեսվող ծախսերի հաշվին:

Մասնավորապես, ԿԳՄՍ նախարարության աշխատակազմում շուրջ 30 նոր հաստիքի ավելացման արդյունքում, ըստ նախնական հաշվարկների՝ անհրաժեշտ գույքի, սարքավորումների (մեկանգամյա ծախսեր) համար կպահանջվի շուրջ 32 մլն 860 հազար ՀՀ դրամ, իսկ շարունակական տարեկան ծախսը կկազմի շուրջ 145 մլն 590 հազար ՀՀ դրամ:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Օրենսդրական նախագծերով իրականացվող փոփոխությունների անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2021 օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին՝ «Կառավարության համար գերակա խնդիր է կրթության և գիտության զարգացումը, ինչի շնորհիվ է միայն հնարավոր հասնել կայուն ու ներառական զարգացման ու համընդհանուր բարեկեցության: Մարդկանց գիտելիքների և հմտությունների ուղղությամբ ներդրումները երկրի զարգացման գրավականն են: Կրթության ոլորտում նախատեսվող աշխատանքները միտված են լինելու քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ, մրցունակ և ապագան իր սեփական երկրում պատկերացնող քաղաքացու ձևավորմանը: Ոլորտի զարգացումը սերտորեն կապակցվելու է պետության զարգացման ռազմավարությանը և գերակայություններին:»:
3-րդ պարբերության 3-րդ կետի պահանջից՝ «.....զարգացնել օտար լեզուների, մասնավորապես ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի....ուսուցումը»

Նախագծի անհրաժեշտությունը բխում է «2050 Հայաստանի վերափոխման ռազմավարություն» ծրագրի «Մինչև 2030 թվականի մեգանպատակների» գործողությունների «1.Կիրթ և կարողունակ քաղաքացի, ժողովուրդ» համար 01 մեգանպատակի թիրախային արդյունքի ցուցանիշի ապահովման պահանջից՝ «Գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների համատարած, ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով ունենանք քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացի, ում համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան պարտականությունների ու պարտավորությունների կատարումը, ով առաջին հերթին իրեն է համարում սեփական բարեկեցության և առողջության պատասխանատուն:»:

Ծրագրի «**Կրթության համակարգի արդյունավետությունը» բաժնի 39-րդ և 40-րդ կետերում** մասնավորապես ասվում է.

«39. Կրթության կառավարման համակարգի արդյունավետությունը բարձր չէ թեԲ ուղղահայաց, թեԲ հորիզոնական ուղղություններով: Կա կառավարչական կարողությունների պակաս հատկապես ռազմավարական պլանավորման և ծրագրերի կառավարման ոլորտներում: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների և գործառույթների վերանայման ու արդյունավետ վերաբաշխման կարիք կա:

40. Համակարգի հաստատությունների կազմակերպական-իրավական ձևերը, ենթակայության սկզբունքները բավարար հիմնավորված չեն: Հանրակրթական դպրոցները, արտադպրոցական հաստատությունները գործում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ ԿԳՄՍՆ), Երևանի քաղաքապետարանի, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների ենթակայությամբ, որի հետևանքով հաճախ խզվում է ընդհանուր քաղաքականության իրականացումը:»:

Մեջբերում ծրագրից՝

«77. Ծրագրի վերջնական նպատակի իրականացման համար մինչև 2030 թվականը սահմանվում են հետևյալ ռազմավարական ուղղությունները.

2) կրթության արդյունավետության բարձրացում, որը կապահովի ռեսուրսի (ներառյալ մարդկային) առավելագույն օպտիմալ և արդյունահենք տեղաբաշխում, համակարգի գործընթացային, ծախսային և կառավարման արդյունավետության բարձրացում՝ հիմնվելով կրթական համակարգի սոցիալական արդարության ապահովման սկզբունքի վրա.»,

«Կրթության արդյունավետության բարձրացումը

82. Կրթության զարգացման սահմանափակ ֆինանսական ռեսուրսները պահանջում են փաստահենք, արդյունավետ կրթության կառավարում: Կստեղծվի արդյունավետ, բաց, կատարողականի և վերջնարդյունքների վրա հիմնված կառավարման համակարգ՝ ապահովելով ինքնավարությունը, հզորացնելով ֆինանսավորման համակարգը: Մասնավորապես՝

1) կրթության կառավարման համակարգի բարեփոխումներ, որոնք կներառեն՝

ա. համակարգի ուսումնական և օժանդակ կազմակերպությունների գործառնական, օրենսդրական համակարգային վերլուծությունից հետո կմշակվեն համակարգի «ճարտարապետական» կառուցվածքի հայեցակարգը, օրենսդրության վերանայումն ու կառուցվածքային բարեփոխումների իրականացումը,

բ. կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ամբողջական ներդրումը, կրթության համակարգի հիմնական ցուցանիշների սահմանումը,

գ. անցումը իրական ծրագրային բյուջետավորմանը, ծախսակազմման բացերի լրացմանը,

դ. կրթության պետական կառավարման մարմիններում ռազմավարական պլանավորման և ծրագրերի կառավարման ոլորտներում գործառույթների հստակ ամրագրումը, վերապատրաստումների իրականացումը,

ե. հանրակրթական հաստատություններում վարչատնտեսական և բովանդակային կառավարման գործառույթների տարանջատումը և մասնագիտացումը, վարչատնտեսական կառավարման գործընթացի կենտրոնացումը, ըստ անհրաժեշտության՝ պատվիրակումը մասնավորին կամ համայնքներին,»,

«3) կառավարման և որոշումների կայացման ներառական, մասնակցային, ինքնավար, թափանցիկ և հաշվետու համակարգի ներդրում, մասնավորապես՝

ա. ուսումնական հաստատությունների ինքնավարության և հաշվետվողականության հավասարակշռված համակարգի ներդրում, բարեվարքության սկզբունքների և վարքականոնների որդեգրում, կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման մեխանիզմների կատարելագործում,

բ. հանրակրթական հաստատությունների կառավարման լիազորությունների աստիճանական պատվիրակում տեղական ինքնակառավարման մարմիններին՝ համայնքների խոշորացման համատեքստում,»…

Սույն նախագծով սահմանված գործընթացի իրականացումը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1363-Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության ծրագրի «4.3 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնի 1-ին՝ «Կառավարության համար գերակա խնդիր է կրթության և գիտության զարգացումը, ինչի շնորհիվ է միայն հնարավոր հասնել կայուն ու ներառական զարգացման ու համընդհանուր բարեկեցության: Մարդկանց գիտելիքների և հմտությունների ուղղությամբ ներդրումները երկրի զարգացման գրավականն են: Կրթության ոլորտում նախատեսվող աշխատանքները միտված են լինելու քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ, մրցունակ և ապագան իր սեփական երկրում պատկերացնող քաղաքացու ձևավորմանը: Ոլորտի զարգացումը սերտորեն կապակցվելու է պետության զարգացման ռազմավարությանը և գերակայություններին:», 3-րդ՝ ««Հանրակրթության ոլորտի առկա խնդիրների լուծման համար անհրաժեշտ է հանրակրթության ամբողջական և շեշտակի փոփոխություն, որի հիմնաքարը մինչև 2026 թվականը հանրակրթության նոր չափորոշիչների ամբողջական ներդրումն է հանրապետության բոլոր դպրոցների բոլոր դասարաններում՝ ապահովելով դպրոցական արդիական ու հագեցված ենթակառուցվածքի, ներառական ու զարգացնող միջավայրի, կրթական որակյալ բովանդակության, բարձրորակ ուսուցչական համակազմի և դպրոցների թափանցիկ ու արդյունավետ կառավարման ամբողջություն: Այս նպատակի իրագործման հիմնական թիրախներն են» պարբերություններով և 3-րդ պարբերության 5-րդ կետով՝ «ստեղծել արդյունավետ, բաց, կատարողականի և վերջնարդյունքների վրա հիմնված կառավարման և ֆինանսավորման համակարգեր՝ թվայնացնելով գործընթացները, կրճատելով

վարչարարությունն ու կոռուպցիոն ռիսկերը, զարգացնելով հաստատությունների կառավարման կարողությունները» սահմանված նպատակներից:

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին Օրենքի՝

Ներածություն բաժնի պահանջից «Անհատի կրթության և սովորելու իրավունքի լիարժեք իրացման համար Ծրագիրը կարևորում է կյանքի տարբեր փուլերում մարդուն անհրաժեշտ որակյալ կրթական ծառայությունների ամբողջական և բազմազան փաթեթի հասանելիությունը յուրաքանչյուր համայնքում և բնակավայրում՝ նպատակ ունենալով ապահովել տարածքային խելամիտ և համաչափ զարգացում ու կյանքի որակի էական բարձրացում:

Ծրագիրն ընդգծում է նաև Հայաստանի Հանրապետության կրթական ծառայությունների և արտադրանքի գլոբալ մրցունակության կարևորությունը՝ դնելով կրթական համակարգի միջազգային ինտեգրման և հայկական կրթական ծառայությունների և արտադրանքի արտահանման հնարավորությունների ընդլայնման կայուն օրակարգ ձևավորելու նպատակ, ինչպես նաև նպաստելու մեծ թվով հայերի հայրենադարձությանն ու ինտեգրմանը:

Մրցունակ կրթական համակարգ ունենալու համար անհրաժեշտ է լինել միջազգային կրթական գործընթացների ոչ միայն ակտիվ մասնակից, այլ նաև ստեղծել հավելյալ արժեք և ունակ լինել կրթական ծառայություններ արտահանելու: Այս առումով անհրաժեշտ է բարձրացնել Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի միջազգային գրավչությունը:»:

«Կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացումը և արտահանումը» գլխում սահմանված պահանջից՝

83. Կրթությունը մրցակցային և կայուն զարգացման հիմքերի վրա դնելու համար հույժ կարևոր է, որ հայկական կրթական համակարգն ամբողջապես ինտեգրվի և լայնորեն ճանաչվի միջազգային հարթակներում, և Հայաստանի Հանրապետությունը վերածվի կրթական ծառայություններ և արտադրանք արտահանող երկրի: Առկա են որոշակի նախադրյալներ (օրինակ՝ Հայաստանի տարբեր համայնքներում բացված ԹՈՒՄՈ կամ ՍՄԱՐԹ կենտրոնները, որոնք տարբեր միջազգային կրթական կառույցների կողմից լայն հավանություն և ճանաչում են ստացել) և շատ ռեալ առաջարկներ ու նախագծեր այլ երկրներում նմանատիպ կենտրոններ հիմնելու առումով:

.....

3) կրթության բոլոր մակարդակներում օտար լեզուների ուսուցման որակի բարելավում.

16) առանձին դասընթացների կամ դասընթացների առանձին թեմաների, ուսումնական մոդուլների և կրթական ծրագրերի՝ օտար լեզվով դասավանդելու հնարավորության ապահովում:»: